ները հռոմէական նահանգին չատ մօտ էին ապրում, բիւզանդական կայսրները ձգտում էին նրանց կուլ տալ, բայց նոյն իսկ Բագրատունիների օրով եւ սրանից էլ յետոյ Տայեցիները միշտ պահպանեցին Իրանի կարգն ու սարքը եւ դարեր յետոյ ընկճուած նախարարների սերունդն ընդունեց Իսլամն ու նրա աշարի (10 %), տասանորդական օրէնքը, որպէս զի դիրքն ու հասոյթը չըկորցնէ։

Ճորոխի իշխանները չէին համոզուում, որ երկրի դերիշխանութիւնը արքայից-արքային յանձնելուց յետոյ, իրենց նախկին կալուածատիրութիւնից զրկուել էին եւ զեղացին միմիայն տասանորդը սրանց փոխարէն տալու էր համապետական գանձարանին, որի մօտ գործաւոր եւ պաշտօնակատար էին դարձել այդ երբեմնի իշխանները։ Հնումն երբ մի իշխան նուաճում էր դրացու կալուածները, ընկճուածին ամբողջ տոհմով կոտորում էր, տիրում էր հողին եւ երկրագործին։ Աշխարհակալութեան ժամանակ միեւնոյն տեսարանն էր կազմում, միայն թէ աշխարհակալը ընկճուածին երբեմն սպանում էր, երբեմն էլ ներում, թողնում էր նուաճնուած երկրին կառավարիչ։ Այս անգամ իշխանն այլեւս կալուածատէր չէր Զրադաշտական կարգերով, այլ յաղթողի ծառան, գործակալը եւ երկրագործից որեւէ մաս, տուրք, բաժ ստանալու արտօնուած